

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի N 1-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԶԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից

26 փետրվարի 2018 թ.

Պետական գրանցման թիվ 10318067

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

19 փետրվարի 2018 թ.
ք. Երևան

N 132-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
8-Ի N 1-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԶԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը և «Իրավական ակտերի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը.

Հրամայում եմ

- Սահմանել չափման միջոցների ստուգաչափման աշխատանքների վճարման գները՝
համաձայն հավելվածի:
- Սահմանել, որ չափման միջոցների ստուգաչափման արժեքը մասնակի ծրագրով 200 դրամ է:
- Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի
«Չափման միջոցների ստուգաչափման աշխատանքների վճարման գները սահմանելու մասին» N
1-Ն հրամանը:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի խորհրդական Պավել Սաֆարյանին:

Ս. Կարայան

ԳՆԵՐ

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԶՉԱՓՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ

I. Գնորդի և վաճառողի միջև առևտրային գործողություններում, արտադրողի և իրացնողի միջև հաշվարկներում

NN Ը/Կ	Ստուգաչափվող չափման միջոցների խմբի անվանումը	Առաջարկվող գինը (ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի
1	2	3
1	Հեղուկի և գազի ծախսի և հոսքի որոշման սարքեր, ջրի հաշվիչներ	
	- Ջրի հաշվիչներ մինչև 20 մմ պայմ. անցումով	500
	- Ջրի հաշվիչներ 25 մմ և բարձր պայմ. անցումով	2500
	- Ծավալի մեծության կերպավորիչ	10000
	- Ուլտրաձայնային ծախսաչափեր	15000
2	Հեղուկ նավթամթերքի հաշվիչ	5000
3	Բնական գազի հաշվիչ	
	- Գազի կենցաղային հաշվիչ	1000
	- Գազի ռոտացիոն հաշվիչ	8000
	- Գազի տուրբինային հաշվիչ	8000
4	Կշեռք	
	- Կշեռքներ՝ էլեկտրոնային կշռի, գնի, արժեքի գրառմամբ	4000
	- Կշեռքներ՝ լաբորատոր	10000
	- Բաժնեկշեռքներ	8000
	- Կշեռքներ ապրանքային	8000
	- Կշեռքներ (ավտոմոբիլային, ամբարձիչային, վագոնային) (3 մասնագ.)	35000
5	Կշռաքարերի հավաքածու	4000
6	Ավտոմոբիլային սակաչափիչներ	2000
7	Նավթամթերքի բաշխիչ աշտարակներ (1 խողովակ)	5000
8	Գազաբաշխիչ աշտարակներ(1 խողովակ)	18000
9	Չափման համար նախատեսված ծավալային տարաներ	
	- Տարողություններ՝ մինչև 10մ³÷100մ³ (1 մ³ գինը)	5000
10	Էլեկտրական էներգիայի հաշվիչներ	1000
11	Հոսանքի տրանսֆորմատորներ	2000
12	Լարման տրանսֆորմատորներ	2000

II. Առողջապահության բնագավառում

NN ը/կ	Ստուգաչափվող չափման միջոցների խմբի անվանումը	Առաջարկվող գինը (ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի
1	2	3
1	Ջերմաչափեր-ջերմակարգավորիչներ	3000
2	Անալիզատորներ	15000
3	Թրթռաչափ	15000
4	Պոլյարոգրաֆ, վոլտ-ամպերմետր	
	- Պոլյարոգրաֆ	17000
	- Վոլտ-ամպերմետր	3500
5	Ռադիոմետր-դոզիմետրեր	
	- Ռադիոմետր	13000
	- Դոզիմետրեր	5500
6	Տոնոմետրեր	1000
7	Էլեկտրակարդիոգրաֆ	9000
8	Էլեկտրամիոգրաֆ	12000
9	Էլեկտրաէնցեֆալոգրաֆ	12000
10	Պուլսոքսիմետր	9000
11	Ուրինոմետր	7500
12	Սպեկտրաֆոտոմետրեր	15000
13	Լսողական առանձնահատկությունների որոշմանն ուղղված չափման միջոցներ	
	- Ադմկաչափեր	13500
14	Ասպիրատոր, ռոտամետր	
	- Ասպիրատոր	3000
	- Ռոտամետր	4000
15	Ֆոտոկոլորիմետրեր	7500
16	քի-մետր	8000
17	Նիտրատոմետր	9000
18	Իոնոմետր	8000
19	Անալիտիկ, տեխնիկական, տորսիոն և էլեկտրոնային կշեռք	
	- Կշեռքներ անալիտիկ	8500
	- Կշեռքներ տեխնիկական	3000
	- Կշեռքներ տորսիոն	4500
	- Կշեռքներ էլեկտրոնային	10000
20	Անեմոմետր	5000
21	Շաքարաչափ	7500
22	Սպիրտաչափ	6000
23	Տեխնիկական և կոնտակտային մանոմետր	1000
24	Խտաչափերի լրակազմ	14000
25	Համակարգչային սպիրոգրաֆ	13000

III. Շրջակա միջավայրի պահպանության, աշխատավայրում անվտանգության ապահովման և պատահարների կանխման ժամանակ

NN ը/կ	Ստուգաչափվող չափման միջոցների խմբի անվանումը	Առաջարկվող գինը (ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի
1	2	3
1	Աղմկաչափեր	14000
2	Հոսքաչափեր	5000
3	Հոսանքի ուժի և լարման չափման միջոցներ	3500
4	Ծխաչափեր	10000
5	Օդի, ջրի, հողի անալիզատորներ	14000
6	Սպեկտրոմետրեր	17000
7	Էլեկտրամագնիսական պարամետրերի չափման միջոցներ	17000
8	Մանոմետրեր	1000
9	pH-մետրեր	8000
10	Իոնաչափեր	8500
11	Նիտրատոմեր	8000
12	Պոտորաչափեր	8500
13	Գազանալիզատորներ	9000
14	Ասպիրատորներ, էլեկտրահաղորդականության չափման միջոցներ	
	Ասպիրատորներ	3000
	Էլեկտրահաղորդականության չափման միջոցներ	2000
15	Համընդհանուր շարժական համակարգի ալեհավաքներ	23000
16	Ալֆա - ճառագայթային աղբյուրներ	21000
17	Բետա - ճառագայթային աղբյուրներ	21000
18	Գամմա - ճառագայթային աղբյուրներ	35000
19	Դոզիմետրեր	5500
20	Հեղուկի և գազի ծախսի և հոսքի որոշման սարքեր, ջրի հաշվիչներ	
	Գազի կենցաղային հաշվիչներ	1000
	Գազի արդյունաբերական հաշվիչներ	8000
	Գազի և ջրի ուլտրաձայնային, էլեկտրոմագնիսական ծախսաչափեր և հոսքաչափեր	15000

IV. Ճանապարհային երթուղիների վերահսկման և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը գնահատելու ժամանակ

NN ը/կ	Ստուգաչափվող չափման միջոցների խմբի անվանումը	Առաջարկվող գինը (ՀՀ դրամ) առանց ԱԱՀ-ի
1	2	3
1	Արագաչափեր	5000
2	Ալկոմետրեր	8000
3	Գազի անալիզատորներ	10000
4	Ծխաչափեր	9000
5	Լուսաթափանցելիության չափման միջոցներ	5500